Այն, ինչ տեսա, զգացի ու ապրեցի այս օրերին՝ տասնյակ տարիների կյանք արժե: Մարդասպանությունը, մարդագողությունը, գնդակոծումը, թալանն ու անասնագողությունը ամենօրյա սովորական երեւույթներ էին: Շաբաթներով անջատվում էր էլեկտրաէներգիան, հեռախոսակապը: Ընդհանուր շրջափակման օղակը գնալով ավելի էր ձգվում, նեղանում, ընդգրկելով առանձին շրջաններն ու գյուղերը:

Պատմեմ Մարտակերտի շրջանի Վերին

Գյուղում մնացածների վկայությամբ՝ զինվորների բերաններից ալկոհոլի կամ թմրադեղերի գարշահոտություն էր փչում, դիմում էին այլանդակ հայհոյանքներով, քաշքշում, ծեծում, թալանում արժեքավոր իրերը, ջարդում կամ տակն ու վրա անում գույքը: Սպաները լկտի բացականչություններ էին անում. *«Ղարաբա՞ղ էիր ուզում, ա՛ռ քեզ Ղարաբաղ», «անկախությո՞ւն էիր ուզում՝ առ քեզ անկախություն»*...

Պահանջում էին 3-ից 5 օրվա ընթաց-

# ԵՎՍ ՄԻ ԱԿՆԱՏԵՍԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ. «Ես 46 օր դժոխքում էի»

**Երեւանաբնակ արցախցի, Հայաստանի՝ ԳԱ կենսաբանության ինստիտուտի ավագ գիտաշխատող Լեւոն Նարիմանյանը ապրիլի 19-ին մի քանի օրով մեկնել էր Արցախ՝ Հաթերք, բարեկամի թաղման կապակցությամբ, սակայն հայտնի իրավիճակի պատճառով՝ վերադարձավ միայն վերջերս...**

Զորակի, այսինքն Հաթերքի ու մոտակա հայկական գյուղերի շուրջ ծավալվող բազմաթիվ դեպքերից ու իրադարձություններից մի քանիսի մասին միայն:

Անասնապահների սպանության եւ անասնագողության մի շարք դեպքեր եղան Վաղուհաս, Ջագլիկ, Չափար, Հաթերք գյուղերի շրջակայքում: Ինչպես կանոն, այդ դեպքերին նախորդում էին ադրբեջանական ուղղաթիռների հետախուզական թռիչքները: Հատկապես ահավոր էին մայիսի հարձակումները կանոնավոր բանակի կողմից: Մայիսի 16-ի վաղ առավոտյան՝ ժամը 6-ի մոտերքը, երկու կողմերից Հաթերք ներխուժեցին 51 զրահամեքենա, որոնց ուղեկցում էին ռազմական 6 ավտոմեքենա, թնդանոթներ, իսկ գյուղի վերեւում ու մոտակա անտառների վրա պտտվում էին ուղղաթիռներ: Ամենուրեք զենքի գրեթե բոլոր տեսակների կրակոցներ էին լսվում: Դա Կիրովաբադից տեղափոխված 4-րդ զորամասն էր, որի մեջ գերակշռող մասը կազմում էին ադրբեջանցիները:

Խուճապահար մարդիկ՝ աղեկտուր ճիչ ու աղաղակով փախչում էին մոտակա անտառները, իսկ զրահամեքենաներն ու ուղղաթիռներն անընդհատ հետապնդում ու կրակում էին: Այդ օրը, միայն Հաթերքից, դաժանաբար ծեծելով տարան 9 հոգու, Ջագլիկից՝ 5 հոգու: Պատանդներ վերցվել էին նաեւ Գետաշենից, Չափարից, Դրմբոնից, Վաղուհասից եւ մյուս գյուղերից:

քում թողնել եւ հեռանալ...

Կալանավորներին անմարդկային խոշտանգումների, ծեծի ու ծաղրուծանակի ենթարկում Շահբուլաղում, Շուշիում՝ ամեն մեկի համար որոշակի գին է սահմանված, որը տատանվում է 10 հազարից մինչեւ 100 հազար:

Որ խորհրդային զորքը վերեւից հրամանների համաձայն է ծառայում ադրբեջանցիներին՝ վկայում է նաեւ այս փաստը: Ումուդլուի թուրքերի կողմից, որը ցերեկով ջագլիկցի երկու անմեղ տղաների դաժան սպանությունից 2 օր անց՝ մայիսի 27-ին Հաթերքի նկատմամբ ռազմական նոր գործողություն ձեռնարկվեց: Այս անգամ զորամասի հիմնական մասը ռուսներ էին: Մնացածը նախորդ հարձակումից համարյա ոչնչով չէր տարբերվում: «Համարյա ոչինչ»-ն էլ այն է, որ թալանի ու ծեծի դեպքերը ավելի քիչ էին: Սպառնալից հարցումներ էին անում բնակիչներին, թե ինչ են մտածում դուրս գալու մասին, հիշեցնում, որ արտաքսման հրամանը վերեւից է տրված ու իրենք չկատարելու իրավունք չունեն:

Այդ օրը մարզի պարետ Ժուկովը հայտարարեց, որ եթե հետագայում եւս գոնե մի հարձակում լինի Ումուդլուի վրա՝ ինքը ստիպված կլինի զորքը ետ քաշել եւ *«թող ադրբեջանցի օմոնականներն անցկացնեն անձնագրային ռեժիմը»*...

[illegible]՝ *Սիմա ԽՈՐՍՏԵՆՅԱՆ*